040.1149.230804

"ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ"
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

"23" օգոստոսի 2004 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

29 հուլիսի 2004 թվականի N 1149-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 239 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

"Համապատասխանության գնահատման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, 38-րդ հոդվածի 2-րդ մասին եւ "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի "բ" կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի եւ ծառայությունների ցանկերը՝ համաձայն NN 1 եւ 2 հավելվածների։

2. Սահմանել, որ՝

ա) Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության պարտադիր հավաստման աշխատանքների դիմաց վճարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի 2001 թվականի մարտի 20-ի N 91 հրամանով սահմանված կարգով հաշվարկված գներով.

բ) մարդասիրական օգնության նպատակով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող արտադրանքի համապատասխանության պարտադիր հավաստման աշխատանքները ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ պետական պատվերի միջոցով։

3. Մասնակի ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 12-ի "Հայաստանի Հանրապետությունում արտադրանքի եւ ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման մասին" N 239 որոշումը՝ բացառությամբ 2-րդ կետի։

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2004 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16-ԻՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության
2004 թվականի հուլիսի 29-ի
N 1149-Ն որոշման

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՎԱՍՏՄԱՆ
ԵՆԹԱԿԱ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ

| Ապրանքախումբն ըստ ԱՏԳ ԱԱ-ի | Արտադրանքի բնութագիրը |
|---|---|
| 1 | 2 |
| 0202 | Խոշոր եղջերավոր անասունների միս՝ սառեցրած |
| 0203 21 - 0203 29 | Խոզի միս՝ սառեցրած |
| 0207 12, 0207 14, 0207 25, 0207 27, 0207 33, 0207 36 | Ընտանի թռչունների միս եւ ենթամթերք՝ սառեցրած |
| 0209 00 110 | Խոզի ճարպ |
| 0210 | Միս եւ մսից ենթաամնդամթերք՝ աղի, աղաջրի մեջ դրած, չորացրած կամ ապխտած |
| 0303, 0304 20 | Ձուկ, ձկան ֆիլե եւ ձկան միս՝ սառեցրած |
| 0401, 0402, 0403, 0405 10, 0405 90, 0406 | Կաթ եւ կաթնամթերք |
| 0407 00 | Թռչնի ձու |
| 0713 - 0713 40 | Սիսեռ, նուտ, ոսպ |
| 0802 50 000, 0804 10 000, 0806 20, 0813 | Պիստակ, արմավ, չորացրած խաղող եւ մրգեր |
| 0901, 0902 | Սուրճ, թեյ |
| 1006 | Բրինձ |
| 1101 00, 1103 | Ալյուր, ձավար |
| 1206 00 | Սերմեր արեւածաղկի մանրատված եւ չմանրատված |
| 1507 10 900, 1509 90 000, 1512 19 910, 1515 29 900 | Սոյայի, ձիթապտղի, արեւածաղկի, եգիպտացորենի յուղ (ձեթ) |

| | |
|---|---|
| 1516, 1517 | Կենդանական եւ բուսական ճարպեր, հիդրոգենիզացված յուղեր, մարգարին |
| 1601 00 - 1605 | Պատրաստի սննդամթերք` մսից, ձկից եւ խեցգետնանմաններից, կակղամորթներից եւ ջրային այլ անողնաշարավորներից |
| 1701, 1702 90, 1703, 1704 | Շաքար, շաքարից պատրաստված հրուշակեղեն կակաո չպարունակող |
| 1805 00 000, 1806 | Կակաոյի փոշի, շոկոլադ եւ կակաո պարունակող այլ սննդամթերք |
| 1901 10 000 | Մանկական սնունդ |
| 1902 - 1905 (բացի 1905 90 300-ից) | Մակարոնային արտադրանք, ալրային հրուշակեղեն |
| 2001 - 2009 00 | Մթերք` ստացված բանջարեղենի, պտուղների (մրգերի), ընկույզների կամ բույսերի այլ մասերի վերամշակումից |
| 2101-2105 00, 2106 90 100, 2106 90 980 | Տարբեր սննդամթերք, հալած պանիր, բուսասերուցքա-յին եւ սերուցքաբուսական յուղերի խարնուրդներ 15 %-ից ավելի կաթնային յուղի պարունակությամբ |
| 2201 - 2209 00 | Ալկոհոլային եւ ոչ ալկոհոլային խմիչքներ, քացախ |
| 2401 - 2403 | Ծխախոտ եւ ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ |
| 2501 00 91 | Կերակրի աղ |
| 2523 21 000, 2523 90 300 | Սպիտակ ցեմենտ` արհեստական ներկված կամ չներկված (պորտլանցեմենտ), պուզոլան-ցեմենտ |
| 2707, 2710, 2711 | Նավթամթերք |
| 3102 - 3105 | Պարարտանյութեր |
| 3208, 3209 | Ներկեր եւ լաքեր |
| 3303 00 - 3306, 3307 10 000, 3307 20 000 | Օծանելիք եւ հարդաջուր, կոսմետիկական, մազերի խնամքի, բերանի խոռոչի հիգիենայի, սափրվելու, հակաքրտնքային միջոցներ եւ հոտազերծիչներ |
| 3401, 3402 20, 3402 90 | Օճառ, լվացող եւ մաքրող միջոցներ |

| | |
|---|---|
| 3819 00 000 | Արգելակային հեղուկներ |
| 3820 00 000 | Անտիֆրիզներ (բացի հակաառցապատման պատրաստի հեղուկներից) |
| 3917 21 100, 3917 22 100, 3917 23 100 | Պլաստմասսայե խողովակներ, փողրակներ, ճկափողեր եւ կցամասեր (օրինակ՝ միացքներ, ծնկեր, կցաշուրթեր) |
| 3923 10 000 - 3923 30, 3924 10 000 | Պլաստմասսայե իրեր՝ փաթեթավորման, փոխադրման եւ խոհանոցային ու ճաշի սպասքների |
| 4011 10 000, 4011 20 | Դողեր՝ օդաճնշական՝ մարդատար, բեռնատար ավտոմեքենաների եւ ավտոբուսների համար |
| 4012 (բացի 4012 90 900-ից) | Դողեր՝ օդաճնշական՝ վերականգնված կամ օգտագործված |
| 4014 10 000, 4014 90 100 | Հակաբեղմնավորիչներ, մանկական ծծակներ |
| 4818 10, 4818 20, 4818 40, 5601 10 | Կենցաղային եւ սանիտարահիգիենիկ նշանակության իրեր՝ թղթից, թաղանթանյութի բամբակից, թաղանթանյութի մանրաթելի պաստառից, բամբակից |
| 6810 91 | Երկաթբետոնե շինարարական կրող կոնստրուկցիաներ, բետոնից պատրաստվածքներ՝ ամրանավորված կամ չամրանավորված |
| 7007 11 10, 7007 21 910 | Անվտանգության ապակի՝ ներառյալ ամրացված ապակի (մխած) կամ բազմաշերտ, որոնք չափերով կամ ձեւաչափերով թույլատրվում են դրանք օգտագործել վերգետնյա տրանսպորտի համար |
| 7213 91 100 | Ձողեր՝ շիկազլոցված ազատ կծկած կաժերով,ածխածնային պողպատից կլոր հատվածքի 14 մմ-ից պակաս տրամագծով՝ բետոնի ամրանավորման համար |
| 7214 99 100 | Ամրան ձողավոր՝ շիկազլոցված պարբերական պրոֆիլով բետոնի ամրանավորման համար |
| 7321 11, 7321 81 | Վառարաններ ջեռուցման, ջեռուցման-եփման եւ վառարաններ ուտելիք պատրաստելու համար գազային վառելիքով |
| 8403 10 | Կենտրոնական ջեռուցման կաթսաներ գազային |

| | |
|---|---|
| | վառելիքով |
| 8419 11 000 | Ոչ իներցիոն գազի տաքացուցիչներ |
| 8311 10 900 | Էլեկտրոդներ՝ էլեկտրաաղեղային եռքի համար |
| 8509 (բացի 8509 90-ից) | Կենցաղային էլեկտրամեխանիկական սարքեր |
| 8516 (բացի 8516 80-ից, 8516 90-ից) | Էլեկտրական կենցաղային տաքացնող սարքեր, ջրաջեռուցիչներ, եռոցներ |
| 8517 30 000 | Կոմուտատորներ՝ հեռախոսային կամ հեռագրային կապի համար |
| 8517 50 | Ապարատներ կրող հաճախությամբ հաղորդալարային կամ թվային հաղորդալարային կապի համակարգերի համար |
| 8525 10 500, 8525 10 800, 8525 20 910 8525 20 990 | Ռադիոյի եւ հեռախոսային, ռադիոհեռագրային կապի, ռադիոհաղորդումների կամ հեռուստատեսային հաղորդիչ եւ ընդունիչ սարքավորումներ (բացառությամբ բջջային հեռախոսների՝ ներառյալ ավտոմեքենաներում տեղադրվողները) |
| 8536 20 100, 8536 41, 8536 50 (բացի 8536 50 900-ից), 8536 61, 8536 69, 8536 90 | Էլեկտրական սարքավորումներ՝ հոսանքի միացման, անջատման, ընդհատման, պաշտպանման եւ փոխադրման համար |
| 9018 31 100 | Ներարկիչներ՝ պլաստմասսայից, ասեղով կամ առանց ասեղի |
| 9302 00 | Ռեւոլվերներ եւ ատրճանակներ (բացի 9303 կամ 9304 ապրանքախմբերում ընդգրկվածներից) |
| 9303 20 950-ից | Ողորկափող որսորդական եւ սպորտային հրազեն, այդ թվում՝ համակցված հրազեն |
| 9303 30 000-ից | Ակոսափող որսորդական եւ սպորտային հրազեն |
| 9303 90 000-ից | Ազդանշանային զենք |
| 9304 00 000-ից | Օդաճնշիչ եւ գազային զենք |
| 9306 10 000-ից | Գամիչ կամ նմանատիպ գործիքների կամ կենդանիների արդյունագործական սպանդի համար նախատեսված կարճ, դուրս թռչող ձողով ատրճանակների փամփուշտներ |

| | |
|---|---|
| 9306 21 000-ից | Ողորկավոր հրազենի փամփուշտներ |
| 9306 29 700-ից, 9306 30 100-ից, 9306 30 300-ից, 9306 30 980-ից | Ակոսափող հրազենի փամփուշտներ |
| 9306 30 980-ից | Գազային, ազդանշանային զենքի փամփուշտներ եւ հրթիռներ |
| 9405 (բացի 9405 10 100-ից, 9405 50 000-ից, 9405 60-ից, 9405 91-ից, 9405 92-ից, 9405 99-ից) | Էլեկտրական լուսավորման սարքավորումներ |
| 9502, 9503 (բացի 9502 91 000-ից, 9502 99 000-ից) | Խաղալիքներ |

(ցանկը փոփ. 23.12.04 թիվ 1829-Ն, 02.02.06 թիվ 238-Ն, 19.10.06 թիվ 1454-Ն որոշումներ)

Հավելված N 2
ՀՀ կառավարության
2004 թվականի հուլիսի 29-ի
N 1149-Ն որոշման

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՎԱՍՏՄԱՆ
ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| Ծառայության ծածկագիրն ըստ ԲՄԾԴ-ի | Ծառայության անվանումը |
|---|---|
| 122101 - 122106, 122200, 122201, 122400, 122403, 122404 | Հանրային սննդի ծառայություններ |